Էլեկտրոնային տրկաձևերը

Евгений Велтистов

Приключения Электроника

Եվգենի Վելտիստով

Էլեկտրոնիկի արկածները

Թարգմանությունը ռուսերենից՝
Նարինե Գիժլարյանի

ԵՐԱՉ

newmag
Երևան
2024

ՀՏԴ 821.161.1–93 Վելտիստով
ԳՄԴ 84(2)–44
Վ 402

Վ 402 Վելտիստով Եվգենի
Էլեկտրոնիկի արկածները / Ե. Վելտիստով.– Եր.: Newmag, 2024.– 196 էջ:

Հանճարեղ գիտնականը ստեղծում է հումանոիդ ռոբոտ՝ էլեկտրոնիկին: Այն փախչում է իրեն ստեղծող պրոֆեսորից, հանդիպում իր «երկվորյակին»՝ մոսկվացի դպրոցական Սերգեյ Սիրոյեժկինին: Էլեկտրոնիկը դառնում է Սերգեյ Սիրոյեժկինի ընկերն ու օգնականը, նրա փոխարեն գնում է դպրոց, սովորում դասերն ու կատարում հանձնարարությունները: Էլեկտրոնիկի մասին իմանում է մաֆիան, որը որոշում է առևանգել հումանոիդին: Այդպես էլեկտրոնիկն ու Սերյոժան հայտնվում են բազմաթիվ զավեշտալի և վտանգավոր իրավիճակներում:

Դա. նախատեսված է 12+ տարեկանների համար:

ՀՏԴ 821.161.1–93 Վելտիստով
ԳՄԴ 84(2)–44

Գրքի գլխավոր գործընկեր՝
ՎՏԲ–Հայաստան Բանկ
vtb.am

ISBN 978–9939–967–49–3
© Велтистов Е. С., насл., 2018
Եվգենի Վելտիստով, «Էլեկտրոնիկի արկածները» © 2024, «ՆյուՄեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ–ին: Իրավունքները ձեռք են բերվել ԱՍՏ հրատարակչության հետ կնքած պայմանագրով:

«Երազ» մատենաշարի գործընկեր
YERAZ PROJECTS

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Չորսբռնականի ճամպրուկը ... 9
Սպիտակ խալա՞թ, թե՞ բանաձևեր ... 13
Ո՞վ է նա՝ չեմպիոնը ... 26
Մոնորտսագ, նուտաղեդ, մուրքամմիք ... 30
Բոլոր ժամանակների աճպարարը ... 40
Ամեն ինչ էլեկտրոնիկի մասին ... 46
Ինչպես ծնվեց էլեկտրոնիկը ... 54
Ինչպես էր սովորում էլեկտրոնիկը ... 65
Ռենտգենը ոչինչ ցույց չտվեց ... 72
Գաղտնիք. «Դու ես եմ» ... 75
«Կարող ծրագրավորողը» ... 80
«Հարսնացուի աթոռը» ... 86
Թեորեմի երեք պահապանները ... 92
Էլեկտրոնիկի առաջին պարտությունները ... 101
Գետաձիու ծածկագիրը ... 110
Զրույց սագի ու օձակրի հետ ... 119
Լավ է, որ շները չեն խոսում ... 130
Գաղտնիքի ծանրությունը. «Ի վերջո, ես մարդ եմ» ... 133
Ի՞նչ է նշանակում մտածել ... 143
Գոտեմարտ «դասուսույցի» հետ ... 151
Երաժշտական կրթություն ... 157
Եթե ժամանակի մեքենա լիներ... ... 162
Հարցական օր ... 175
«Սիրոյեժկինը ես եմ...» ... 185
Նա ծիծաղում է ... 187

ՉՈՐՍԲՌՆԱԿԱՆԻ ՃԱՄՊՐՈՒԿԸ



Սայիսյան մի լուսադեմի չորսբռնականի ճամպրուկը գլխին, բաց մոխրագույն ավտոմեքենա մոտեցավ «Կաղնուտ» հյուրանոցին: Մեքենայի դռները լայն բացվեցին, ծխամորճն ատամների արանքում մի մարդ դուրս թռավ: Բարեհամբույր դեմքեր ու ծաղկեփնջեր տեսնելով՝ ամաչկոտ ժպտաց: Պրոֆեսոր Գրոմովն էր: Կիբեռնետիկների կոնգրեսի պատվավոր հյուրը Սինեգորսկից ժամանել էր սիբիրյան գիտական քաղաք ու, ինչպես միշտ, որոշել կանգ առնել «Կաղնուտում»:

«Կաղնուտ» հյուրանոցի հանդիսավոր դիմավորումը կազմակերպած տնօրենը սկսեց զբաղվել իրերով: Լայն բացած բեռնախցիկի երախից դուրս էր ցցվել վիթխարի ճամպրուկի կլորավուն անկյունը:

— Ը՛, նույնիսկ Ձեզ պես ուժեղ մարդու համար դժվար կլինի տեղից պոկել այս ճամպրուկը,– ասաց պրոֆեսորը՝ նկատելով, որ տնօրենը նայում է ճամպրուկին: — Կարգին ծանր ճապրուկ է:

— Չէ մի,– արձագանքեց տնօրենը: Մկանուտ ձեռքերով ճանկեց ճամպրուկն ու դրեց գետնին: Ու կաս-կարմիր կտրեց: Սև ճամպրուկը երկարավուն էր, չորս բռնակով: Արտաքուստ կոնտրաբասի պատյանի էր նման: Այնուամենայնիվ գրությունը հստակ բնորոշում էր պարունակությունը. «Զգուշացե՛ք, սարքավորումներ են»:

— Այ քեզ բան,– գլուխն օրորեց տնօրենը: — Ո՞նց եք գլուխ հանել, պրոֆեսո՛ր:

— Չորս բեռնակիր էի վարձել, հրահանգում էի,– ասաց Գրոմովը:

— Ձեզ հյուրանոցի նույն համարն ենք տրամադրել: Դեմ չե՞ք:

— Հիանալի է: Երախտապարտ եմ:

Տնօրենն ու երեք օգնական կառչեցին բռնակներից ու ճամպրուկը երկրորդ հարկ բարձրացրին: Հետները բարձրացած պրոֆեսորը բավականությամբ զննեց հյուրասենյակի բաց կապտավուն պատերը, հարմարավետ կահույքն ու լայն, ամբողջ պատը զբաղեցնող պատուհանների դիմաց դրված փոքրիկ աշխատասեղանը: Զգաց, որ սենյակը սոճուտի բույր ունի և ժպտաց:

Տնօրենը սեղմեց դռան կողքի կոճակներից մեկը:

— Պարտադիր չէ՝ փշատերև ծառի հոտ գա: Եթե կուզեք, ծաղկուն մարգագետին, մանուշակներ ու անգամ ձմռան եղանակ կլինի: Սրանք բույրերի գեներատորի կոճակներն են: Տրամադրությունը բարձրացնելու համար:

— Ամեն ինչ հրաշալի է, հիանալի տրամադրություն է ստեղծում,– հանգստացրեց նրան պրոֆեսորը:

— Այդպես էլ մտածեցինք: Խնդրեմ, տեղավորվեք, հանգստացեք,– և հյուրանոցի տնօրենը հեռացավ:

Պրոֆեսորը բացեց պատուհանը: Վաղորդյան զեփյուռը, տերևների խշշոցով լցվեց սենյակ և խճճվեց թափանցիկ վարագույրների մեջ: Լուսամուտի տակ հզոր կաղնիներ էին աճում: Արևի շողերը թափանցում էին ծառերի թավ կատարների միջով ու լուսավոր խայտերով արտացոլվում հողին: Հեռվում շնկշնկում էին անվադողերը: Ծառերի վերևում կչկչաց օդային տաքսին՝ փոքրիկ ուղղաթիռը:

Գրոմովը ժպտաց: Նա ամենևին չէր ընտելանում այդ ուղղաթիռներին ու սովորական տաքսիով էր գնում-գալիս: Պրոֆեսորը տեսնում էր, որ քաղաքն ընդարձակվել է ու ավելի բարեկարգվել: Կայարանից եկել էին կիլոմետրերով ձգվող ծաղկանոցների մոտով, պատվո պահակախմբի պես քարացած կանաչ ծառերի անվերջանալի միջանցքով: Ուր նայես, մի նոր բան կգտնես՝ կեչու պուրակ, սլացիկ սոճիների շուրջպար, ճերմակ թիկնոցներով խնձորենիներ ու բալենիներ, ծաղկափթիթ եղրևանիներ... Այգիները կախված էին նաև վերևում, շենքերի տանիքներին: Դրանք տեղումներից պաշտպանված էին թափանցիկ շարժական գմբեթներով: Շենքերը

փայփլուն ժապավենների պես գոտևորած պատուհանների արանքում ևս կանաչ բուսականություն էր: Գալարուն բույսերը կառչում էին քարից ու բետոնից:

— Կաղնիները կարգին աճել են,– ասաց պրոֆեսորը՝ պատուհանից նայելով:

Այո, երկար տարիներ չէր եղել այս քաղաքում:

Կռացավ ճամպրուկի վրա, բացեց կողպեքը, հետ գցեց կափարիչը: Ճամպրուկում, փափուկ, երկնագույն նայլոնի վրա, մարմնով մեկ ձգված, պառկել էր աչքերը փակ մի պատանի: Թվում էր՝ խոր քուն է մտել:

Պրոֆեսորը մի քանի րոպե նայում էր քնածին: Չէ, ոչ ոք չէր կարող անմիջապես կռահել, որ իր աչքի առաջ կիբեռնետիկական տղա է: Կճատ քիթ, գլխի գագաթին ցցված մազափունջ, երկար թարթիչներ, կապույտ բաճկոն, վերնաշապիկ, ամառային տաբատ: Նրա պես հարյուրավոր, հազարավոր տղաներ էին չափչփում քաղաքի փողոցները:

— Սիա և տեղ հասանք, Էլեկտրոնիկ,– մեղմ ասաց պրոֆեսորը,– ո՞նց ես:

Տղայի թարթիչները թռթռացին, պսպղուն աչքերը բացվեցին:

Տղան վեր կացավ ու նստեց:

— Լավ եմ,– ասաց փոքր-ինչ խզված ձայնով: — Ճիշտ է, մի քիչ թափ էր տալիս: Իսկ ինչո՞ւ պիտի ճամպրուկում պառկեի:

Պրոֆեսորը նրան օգնեց ճամպրուկից դուրս գալ, ուղղեց կոստյումը:

— Անակնկա՛լ: Պիտի իմանաս՝ անակնկալն ինչ է: Բայց դրա մասին հետո կխոսենք: Հիմա արի մի շատ կարևոր արարողություն անենք:

Նա Էլեկտրոնիկին նստեցրեց աթոռին, նրա բաճկոնի տակից հանեց փոքրիկ էլեկտրական խրոցով դյուրաթեք, ձգվող հաղորդալարն ու մտցրեց էլեկտրական վարդակի մեջ:

— Վա՛յ,– վեր թռավ Էլեկտրոնիկը:

— Բան չկա, բան չկա, դիմացի՛ր,– հանդարտ ասաց պրոֆեսորը: — Սա շատ կարևոր է: Այսօր շատ ես շարժվելու: Պիտի էլեկտրական հոսանքով ուժ առնես:

Թողնելով Էլեկտրոնիկին՝ պրոֆեսորը մոտեցավ տեսահեռախոսին, սկավառակին հավաքեց համարը: Երկնագույն էկրանը լուսավորվեց: Գրոմովը տեսավ ծանոթ դեմքը:

— Հա, հա, Ալեքսանդր Սերգեևիչ, այստեղ եմ արդեն,– ծխամորճից օղակ-օղակ ծուխ արձակելով՝ առույգ ասաց Գրոմովը: — Ինքնազգացողությո՞ւնը: Հիանալի:

— Չեմ ուզում,– պրոֆեսորի թիկունքում լսվեց Էլեկտրոնիկի խզված ձայնը: — Ես այսպես չեմ կարող...

Պրոֆեսորն Էլեկտրոնիկի վրա մատ թափ տվեց ու շարունակեց.

— Համեցեք, եկեք... Սպասում եմ... Զգուշացնում եմ, Ձեզ անակնկալ է սպասում:

Էկրանը հանգավ: Գրոմովը շրջվեց, որ տղային հարցնի՝ ինչու է կամակորություն անում, բայց չհասցրեց: Էլեկտրոնիկը հանկարծ պոկվեց աթոռից, վազեց լուսամուտագոգի մոտ, կայծակնային արագությամբ բարձրացավ վրան ու երկրորդ հարկից նետվեց ցած:

Հաջորդ ակնթարթին պրոֆեսորն արդեն պատուհանի մոտ էր: Տեսավ՝ ինչպես է ծառերի արանքում փայլկլտում կապույտ բաճկոնը:

— Էլեկտրոնիկ,– բղավեց Գրոմովը: Բայց տղան արդեն անհետացել էր:

Գլուխն օրորելով՝ պրոֆեսորը գրպանից հանեց ակնոցն ու կռացավ էլեկտրական վարդակի վրա:

— 220 վոլտ,– նրա ձայնում տագնապ կար: — Այս ի՛նչ արեցի,– նետվեց դռան կողմը:

Սանդուղքով ցած վազելով՝ նկատեց տնօրենի զարմացած դեմքն ու հանգստացնող շարժումով ձեռքը թափ տվեց: Բացատրությունների ժամանակը չէր:

Մայթի մոտ տաքսի էր կանգնած: Գրոմովը կտրուկ բացեց մեքենայի դուռը, իրեն գցեց նստոցին: Շունչ առնելով՝ վարորդին կարգադրեց.

— Առա՛ջ, առա՛ջ: Պիտի հասնենք կապույտ բաճկոնով տղայի հետևից:

Այսպես սկսվեցին արտասովոր այն իրադարձությունները, որոնք իրենց հորձանուտում բազում մարդկանց ներգրավեցին:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark